

նէս Գոռոզի, Սիբիրիոյ նուաճման մասին հազարաւոր տողերից բաղկացած երգեր: Լեորոգոսի, Լիբիոսի պատմութիւնները, ինչպէս վերեւում մեզ հասնողները, ըստ նոցա խոստովանութեան հիմնած են շատ անգամ ժողովրդական զրոյցների վերայ: Արեւելքում շրջող բազմաթիւ զրոյցները հին կտակարանի գործող անձանց, գրիտտոսի, նորա աւարեալների, աւետարանիչների, զանազան սրբոց մասին կենդանի ապացոյց են, որ նոյն իսկ գրականութեան տարածուից յետոյ բանաւոր աւանդութիւնները կը շարունակեն դեռ աճել եւ զարգանալ ժողովրդի մէջ: Բնական է, որ Խորենացին հարկ է զգացել ու զննել «պատաւանց զրոյցներին», որոնք առատ աղբիւրներ կը ծառայէին նորա պատմութեան պակասաւոր էջերի համար:

Ի նկատի է առնելու մի վերին աստիճանի հետաքրքիր, բոլոր ազգերին յատուկ երեւոյթ, որ մեր ժողովուրդը կը սիրէ շատ անգամ իւրացնել եւ ըստ իւր ճաշակի եւ հասկացողութեան մշակել օտարազգի առասպելներ, նոյն իսկ Նայայցնել նոցա, ինչպէս մենք մեր ժողովրդական վեպում դէպք ունեցանք ստուգելու: Էյ յ ժողովրդի մէջ Խորենացու ժամանակ պէտք է ապրէր ոչ միայն Պարսից, այլ եւ հարեւան արեւելեան ազգերի զիւցազանց համբաւը, որ հեշտիւ կարող էր ազգային հերոսների վերայ անցնել:

Ահաւասիկ որչափ լայն ասպարէզ կը բացէր Խորենացու առջեւ՝ իւր հնագոյն նախնեաց յիշատակը արձանագրելու համար: Այլ խնդիր է, թէ ինչ շախիղ եւ ինչ կերպ է ինքն պատմագիրը մշակել այս բանաւոր նիւթը, ինչ կնիք է թողել նորա անձնաւորութիւնն անգիր աւանդութեանց վերայ. հարիւրաւոր դարերի հեռաւորութեան վերայ հազիւ թէ ժամանակակից քննադատը Ննարակութիւն ունենայ շատ զեպքերում՝ գտակել միմեանցից ժողովրդի եւ պատմագրի խմբագրական զրոյցը՝ օտար եւ ազգային առասպելների նկատմամբ: Թամնայն զէպս Խորենացին, իբրեւ ուսեալ հոգեւորական, պէտք է քաջ ըմբռնէր, որ «անգիր զրոյցների» վերայ հիմնած մի ազգի հեռուոր անցեալի պատմութիւնն չէր կարող հեղինակութիւն վայելել ոչ ներկայ եւ ոչ ապագայ սերունդների մէջ. սորանով մեզ պարզուում է նորա բուն ձգտումը՝ առանձին արժէք եւ նշանակութիւն չնորհել իւր երկին «նիւուէի արբուների

Յ Ես իմ «Էյ յ ժողովրդական զիգօգնական վեպ», Ղ իննու, 1902:

զիւանի» մէջ պահած մի ինչ որ մասերի հեղինակութեամբ. պարզ է, թէ ինչու նա «զոմն Ասորի Մար Աբաս Կասիանայ, այր ուշիմ եւ վարժ քաղաքացի», որ կ'ապրէր քրիստոնեաց դարերում, կը ստիպէ դեռ Վալարշակի օրերով (!) Նիւուէ (!) գնալ՝ «զմերոյ ազգիս միայն զպատմութիւնն հաւաստի», հանելու համար. պարզ է նաեւ, թէ ինչու նա Մծբինի արձանագրութեան բովանդակութիւնը (որ ծանօթ էր իւր նախորդ Անանուին), հռչակաւոր «մասնի», միայն «մասն ինչ» կը համարէ, որպէս զի իւր պատմութեան մանրամասնութիւնն զարմանք չյարուցանէ իւր ժամանակակիցների մէջ: Պարզ է վերջապէս, թէ ինչու պատմագիրը միւս կողմից կարիք կը զգայ սեղ սեղ արգարացը իւր pseudo-նիւուէական մասերի առասպելները հայ ժողովրդի «անգիր զրոյցներով», որոնք հազիւ թէ Մար Աբասի պատմութեան նիւթ կը կազմէին:

Բայց եւ «նիւուէի մասերի», հռչակը բաւական չէր հանդիսանալ՝ հայ ազգի առաջին զիւցազներին խորք պատկառանք ներշնչելու համար. ժամանակի պահանջին եւ ճաշակին համաձայն Խորենացին աշխատել է սերտ հանգոյցով կապել «Էպիպանեան, յեղը Աստուածաշնչի հանրածանօթ նահապետների տոհմի հետ, մկրտել նոցա մի սրբազան առաջնի մէջ, որպէս զի աւելի վեհ է ազնիւ հանդիսանայ ազգի օրորոցը: Այս կապը այն աստիճան արեւտական է եւ պատմագրի ճիգը այնչափ ակներեւ, որ ոչ մի «անգիր զրոյցներով» կարելի չէ նորան արգարացնել:

(Էրուստիսի.) A. ՆԱՍԱԹԵՆՍ



ՊՅՏՐԱՆ ԵՂՈՒԿԱԳՈՍ ՍԻՆՆՈՍ

(Էրուստիսի.)

«Գիրք թղթոցի, նամակներէն տեսանք զՊետրոս Միսայն 555ին ի Գուլն Ներսէս Բ. կն խմբուած ժողովոյն մէջ: Իսկ 551—2ի ժողովոյն նկատմամբ վաւերական ժամանակակից աղբիւրներէ անդեկութիւնն չունինք: Եեսուդարեան մատենագիրը, սկսեալ Յովհաննէս Զ. Պատմաբանէն (թ զար) մինչեւ Օրպէլեան առ հասարակ Մովսէս Բ. ին կ'ընծայեն այս ժողովն: Միայն Յովհ. Խմատաւորի անուամբ մկրտեալ Մանազկերտի շարժաղովոյն պատմութեան մէջ՝

Յ Գիրք Թղթոցի, ել 220—223:

եւ անկէ Ասողկան քով,<sup>1</sup> Ներսէս Բ.ին կը վերադարձուի, խօսքերն են. "Ի սկզբան թուականութեանս Հայոց, Չ ժողովն արար Տեր Ներսէսը, ի դ Դուռնի, ի դ ամի կաթմաղկոսութեան իւրոյ, եւ ի Իր ամի թագաւորութեան Խոսրովու արքային Պարսից եւ ի Ժր ամի Յուստիանոսի կայսեր: Չայս ժողով արար Տեր Ներսէս Տակաւակ ժողովոյն Քաղիկզանի:"<sup>2</sup> այլուր "Ժողովն Դուռնի, զամաղեանն ի Տեր Ներսէսէ եւ ի Պետրոսէ Բերրոզէ Սիւնեացն եպիսկոպոսէ, եւն. եւ գրածեալ "Տեր Ներսէս ամ Թ. առ որով ժողովն Դուռնի եղևւ.":<sup>3</sup> Հոս յայտնապէս կը տեսնուի թիղթից Հեղինակին աղբիւրն, պսիւրն եւ, ծանօթ էր իրեն "Գիրք թիղթոցն," մեր յիշատական Ներսիս Խանակն. վասն զի կ'ըստի աւանդ կոչելու "ի սկզբն թուականութեանս Հայոց" եւ "ի դ ամին կաթմաղկոսութեան իւրոյ ուրնն" (548 + 4 =) 552. "եւ ի Իր ամի թագաւորութեան Խոսրովու" (531 + 24 =) 554—56, օրինակուած Ներսիսի Բ. թիղթին: Իսկ "եւ ի Ժր ամի Յուստիանոսի կայսեր, խօսքերն կը մնան խնդրոյ նիւթ:"<sup>4</sup>

1 Մերայէ Ասորին եւս Ներսիսի կ'ընծայէ: Ի Տարիէ Ասողկեն քաղաւով: — Թէ Հաստատուա 551—2ին ի Դուռնի ժողով եւ Հայոց թուականութեան նորագոյնութիւն տեսի ունեցան է, յատուկ առաւանդաւորութեան կարգու է վասն զի ինչպէս ըսիրք. Յետաւարտելոյ (Թ գար) քով կը յիշուի առաջին անգամ եւ ժողովոյ գոհակարար անորոշ է. անորք Ներսիս Բ. այլ Յովհաննէս Բ. եւ առասար Կաս Ժ'այ Մովսէս Բ. ի սեպտականին: Եթէ օրեւորք կանգն յարոցնոր Հայոց թուականութեան Հաստատութեան ժամանակին նկատմամբ, որով կը նշմարէք: Ըստագոցոց սպասուած յիշագործութեան ժամ պիտի ըլլայ:

2 Անդ էլ 221: 3 Անդ էլ 222: 4 Անդ զիցոց Տայեղեակեան Կանիւր փորձոց վերջես Տեսուեալ մեկութիւնն ալ. "Այս ժամանակ յայն ժամանակագրութիւնք քննելով" կը գտնելք թէ ինչպէս նագրան է Յովհաննէս Իմաստորի ժամանակագրան այս վրիպակը: Որովհետեւ 541 Բ. Զ. տարին սկսեալ 24 տարան միջոցին Բիւզանդիոնի պաշտօնական յիշատարանները չէին Տալեար կամ թուական կեր Յուստիանոս Թագաւորութեան տարին, այլ Բասիլիոսի Տիւրկոստանութեան սկսելով: Օրինակի Տամար Չափական ժամանակագրութեան մէջ 555 Բ. Զ. տարին թուականուած է պարզապէս այպա՛ն "կրկն Տիւրկոստանութեան Բասիլիոսի Ժր", յուսարեւ ընդգծել մէջ՝ յետ Յիսուս Ծաւալու տ Ժ'. Հայազգի մը չհասկնալով 545—565 տարիները թուարկելու այս սեղ' Բասիլիոսի անշ գրած է լով Յուստիանոսն անանընդ (Հանդիս Անտրոյ 1903, էջ 155) Թեպետ Թէ օրմանութեանը պարզան է տարեր չէպազուան, սակայն հոս եւս կ'ընթե կը մնայ այն կէտն, թէ Թուսից ծանօթ է այդպիսի ժամանակագրութիւն մը Թ-ձ գարեկու մէջ կարկաստի մը, եւ եթէ ծանօթ ալ ըլլայ՝ Ի՞նչ հիմամբ Բասիլիոսը "Յուստիանոսի" կը փոխէ:

Փաս առ Չափական կաթմաղկոս յոսն թիղթին մէջ հետեւեալ կերպով կը պատահ Ներսիսի ժողովն. "Հայաւուսականութիւն վասն ժողովոյն (Բարեկեանի) ինչ ոչ գար, այլ անմեղեան ընդունելի զժողովն, մինչեւ ի ժողովն

Օրպէլեանն ինքն իսկ հաստատուն չէ իր պատմամբն վրայ. վասն զի այլուր ըսած էր

Դիմայ, որ ինքն անձայն ամբ 2 եւ Գ երկու (Ներսիսի, 2, Ներսի) ամաց Մարկիանոսի (2, կոյսեր) մինչեւ ցժ ամ Յուստիանոսի եւ մինչեւ ցժ ամ Ներսիսի կաթմաղկոսի, որ Ալուակարան (Ս. յաշտարակեան, 2, յաշտարակեան) էր, որ արար զժողովն ի Քաղիկէ ի սկզբան (Ս. սկզբան լուսնի) թագաւորչլն Հայոց (Ս. եւ Պարսից եւ ի դ եւ Ժ ամին Խոսրովու. Պարսից արքային ի մեան Մարկիանոսի արար. Պ. երկու էր ի Սասնոյ (Ս. եւ 2. Սասնոյ) ի Սարաթոյ վանիցն եւ այլք ընդ նմա, որ մեծարքեան, (Ս. եւ 2. Ի կը յառնուան եպիսկոպոսաւք ի Ներսիսի) եւն. (Հ. 221. "Փառլոք Փառայն յուստիանոսի, Տայեղեան եւ ուսարեան ի դիւր Սրառասաւ Սառասաւ Շօրառա, Ես սլագա 31. Շ. Սեթօք. 1892, էջ 181, հաստատու յառով քերան է նուա 2. Չափեան Պատմ. Հայոց, Բ. էջ 495. եւ 2. Բ. Սարգիսեան "Սրահամ եպ. եւն. էջ Իր. որոց արարեալ թիւննր զՔրիստոս զՔրիստոս փակոյնի մէջ. Եսակն է որ թիղթոյ յայն ընդգրկել չկայ այժմ մէջեան, Փառայ Տայեղոց այն հրատարակութեան մէջ նամակն փայն Տայեղ գտանք, զոր ի ուս. փոխան է Կ. Մառ: Կը կանգնածի՞ մի գուրն Փառայ այն թիղթին ներշնչուած եւ կցկուած ըլլայ Մառակերտ ժողովոյն պատմութեան տարեքն, թեպետ ըստ երևու թիւն մեծ Խոսր կայ երկուքն մէջ: Վասն զի Փառայ այն թիղթին, այն մինչեւ մէջ ինչպէս զար Երգերնս հասած է. աւել իտե՛ր եւ անհամարան ժամանակագրութիւն ունի քան մերինք, որուն ժոյց թէ սուսգիլ Փառայ մեղքն էրան եւ, ի Տարիէ երկուքն կը ապ մեղք Տալուակար ժամանակագրին անուն: Ա՛ս պատկերք.

452 + 84 = 536 Դուռնի ժողովն եւ Յուստիանոս 10ր տարին 548 + 6 = 554 Ներսիսի Չ տարին 551 ? = Հայոց թուականն 531 + 14 = 545 Խոսրովու 14ր տարին, հետեւապար եւ ոչ մէկեղի կը բանին:

Արդ եթէ առ ժամ մը ընդունելք, թէ Մամաղկերտ ժողովոյն պատմութեան Հեղինակն ունէր առեւան իր արդիւր "Գիրք թիղթոցն" եւ Փառայ միջոցիւն թուարկէ, զժուար պիտի չըլլայ պիտի հետեւ իտերին լուծուան առջը: "Գիրք թիղթոցն" մէջ կարգացած է Հեղինակն եւ քաղած "Ի Իր ամի թագաւորութեան Խոսրովու արքային Պարսից, Փառայ քով նային գտած է Ժր, զոր ի Տարիէ իրեւ. սխալ համարան է Խոսրովու համար, եւ այն ասուն է "Յուստիանոսի", իսկ "Չ", առ Փառայ ընթեանը. նքր Գ. Փառայ "ի սկզբան թագաւորչլն Հայոց Պարսիցն ըսածն ըստ դիւրին էր Տայու մը քով" Կ' սկզբան թուականութեան Հայոցի չըլլելը, որ անից նշանակոյցն է Հայ ժողովն ինչպէս որ ալ եղան է Չձ (— 1321) թուականն օրինակուած նեւապար մը Յիշատակարանի մէջ, որ կը կարգար Փառայ այն տարեքն "այսպ հայաւուսականութիւն ոչ գար" Տարիք չարու ամ. մինչ ի վերին Ներսի, ի սկիզբն թուականութեան Հայոց ի Դր ամի Յուստիանոսի եւ ի Դն Խոսրովու Պարսից, որ արար ժողովն ի Դուռնի, եւ: Է. Գ. Չարք. Հպիլ թարգմ. էջ 750: Մեր նպատակն գուրք ըլլալով գրութեան ժամանակն ժոյց ընդգործակ ուսումնասիրութեան մ'ընծայեց, կը բաւականանար հոս Փառայ այն թիղթին օրիշ անից շտապիկ հետքեր ցոյց տալու, որովոր Տամարեւ. նքր Յուստիանոս. "Յուստիանոս, ուղղապար թիւնն եւ Ներսիսի ժողովն "Հայաւակ ժողովն քաղիկեանի հրատարակութիւն, որ վերջիւնալ թիղթերն այնք իտեք կը կառահուի. — Թէ Ներսէս Բ. ինչ կարեւոր ունէր այն տեղեկական սինհագրասի ժոյց, ի դ եւ Ժ ամին իտերին գուրքն է. — Ըստ ոչսմ թիղթ կերպարանի Հեղինակն, որովոր որ կ'ուզէ, Յովհաննէս Ի. Օմեղեանն անուան ներքեւ 728ին, այն անիցքն է որ Փառայ 858—888) թիղթին վերջն Թ-ձ գարեկու. մէջ կ'իտայ:

թէ՛ 551ի ժողովոյն Պետրոսի երկրորդ յաջորդն, Վրթանէան էր ներկայ, ահա խօսքերն՝ «Վրդի կարգել թուականին մեծաւ ժողովով ի Գուին քաղաքի, էր եպիսկոպոս Սիւնեաց Ցէր Վրթանէան, եւ իշխան՝ տէր Միհր Սարաշիր յորում ամի նոյն ժողովով Հաստատեցին զՍ. Աստուած որ խաչեցարն ընդդէմ Քաղկեդոնականացն եւ Նետտորի իմացմանցն,» ասոր կը կցեն ուրիշ օրինակք Յիզաիրուզոսի նահատակութեան յիշատակութիւնն: Սակայն այս բացարձակապէս անկարելի է ժամանակագրական տեսակիւնէ:

Ինչպէս Հ. Չամչեան լաւ դիտած է,<sup>1</sup> Սիւնեաց պատմութեան Տեղեկանց Պետրոսի կենսագրութեան մէջ իբրև աղբիւր գործածած է զՍտեփ. Ասողիկ եւ զՎարդան: Ասողիան խօսքերն են,<sup>2</sup> որ առկէն ունեցած է Մանազկերտի ժողովոյն Պատմութիւնն եւ Փոռոյ առ Զաքարիա կաթողիկոս թուղթն. Ներսէս Աստարակեցի՝ ... ի Դ ամի Հայրապետութեան իւրոյ, եւ ի Ժ ամի իշխանութեան Մեծ էմայ արք. ժողով ի քաղաքն Գուին: Եւ էին զիտաւոր ժողովոյն Պետրոս եպիսկոպոս Քերթնող Սիւնեաց եւ Ներշապուհ ի Ցարոնոյ. եւ կարգեցին զթուականն Հայոց ի ԺՂն Յուստիանոսի կայսեր, որ զՍ. Մովսիս շինեաց, եւ ի իրն խորսով, որբոյ կաւտայ Պարսիք արքայի. յորում ամի Ս. Յեղեթուզոս կատարեցաւ ի Քրիստոս:»

Իսկ Վարդան, որուն աղբիւր եղած են Յովհ. Զ. Պատմաբան, Փոռոյ թուղթն եւ Ասողիկ, կը գրէ.<sup>3</sup> «Սա (Մովսէս Բ.) ի Ժ ամի Հայրապետութեանն իւրոյ, եւ յԱՍ ամին խոսրովու, որբոյ կաւտայ, եւ ի ԺԳ Յուստիանոսի՝ որ զՍ. Մովսի շինեացն, եզիր թուականն Հայոց եւ ստմար. եւ (էր) մարդպան Հայոց Մեծեժ գնունի եւ ի դիր թուականին էին Պետրոս եպիսկոպոս Քերթնողն Սիւնեաց, եւ Ներ-

շոս իշխէր Հարեանդի եւ, որ «Ստեփանոս իմաստասեր», ոչ թէ Ստեփանոս Սիւնեաց քերթնողն եւ եպիսկոպոսն (736) է, ինչպէս կ'ենթադրէ Գ. Ցէր-Մկրտչեան, այլ ուրիշ մէջ. որուն գրութեան ժամանակն իջ յետաճգուի Թ—ժԱ դարերու մէջ. քան որ Յովհ. իմաստասերն վնասութիւն ի մէջ կը բերուի «Չնոյնն եւ Յուհան իմաստասեր տէրք խօսքերով. որ ո՞նք վախճանած անմ մէջ կը յարարեն: Մեր կարեւրքով «Ստեփ. իմաստասեր» ժԱ դարուն արքայ Ստեփանոս Գիմաստասերը անուն անն է, որ զՍմանուէլ Անեցին ստմարական գրութիւն մը յօրինելու յորդորած է, եւ Ն. Շնորհալէկն ինչ մէջ քրոջ սկիւնութիւն ինչորտէ: Հմմտ. Շնորհ. եւ պարզապէս իւր. էջ 123, 265:

- 1 Օրպէլ. էջ 70:
- 2 Պատ. Հայոց. Բ., էջ 514—5:
- 3 Ասողիկ, Պատմ. տեղեկական Ս. Պետրոսի րգ 1885, էջ 83:
- 4 Հասարակ Պատմութեան Վարդան Վարդապետի. Վեներակի 1862, էջ 57—58:

շապուհ ի Ցարոնոյ, եւ Վերդիշոյ ի Սմանայ, զոր եպիսկոպոս ձեռնադրեաց Մովսէս,»<sup>1</sup> Ըստ այսմ Օրպէլեան՝ Ասողիան Հետեւելով, որուն Հետ կը միաբանէր «Գիրք թղթոցն» ալ, Ներսէս Բ. ի ժողովոյն կը մասնակցի, եւ Վարդանայ խօսքերն վաւեր Համարելով Մովսէս Բ. ի կարծեցեալ ժողովոյն:<sup>2</sup>

Մենք Գիրք թղթոցի Հետեւելով Ներսէս Բ. ի Գունոյ ժողովն կը դնենք 555ին, եւ այս ժողովոյն միայն մասնակից կը Համարինք զՊետրոս: Թերեւս այս ժողովոյն մէջ սահմանուած ըլլան Ներսէս Աստարակեցոյն եւ Մերշապուհ Ցարոնու եւ Մամիկոնեանցի եպիսկոպոսի անուամբ գանուած կանոնները:<sup>3</sup>

Այս կէտն ըստ մասին Հարթուած տեսնելէն վերջն՝ անցնիմք ուրիշ խորհրդաւոր գործեան Տանգոյց մը լուծելու. այն է, թէ ի՞նչ աղբիւր ունի Պետրոս՝ կաթողիկոսութեան կրկին բաժանման Տես: Այս գէպքին առիթուն հեղինակն եղած է Մ. Կաղանկատուցի (Ը—Բ դար)<sup>4</sup> որմէ բառ առ բառ յառաջ կը բերէ նաեւ Ուխտանէս,<sup>5</sup> եւ ասոնցմէ բանաբարած է Օրպէլեան: Կաղանկատուցին կ'ըսէ. «ՉՀայոս Պարսիք եւ Յոյիք բաժանեալ էին, եւ Ցէր Մովսէս էր յաթնու Ս. Գրիգորի ի Գուին. եւ կողմանց Յուսեաց Հակառակ նմա նստուցին զՅովհանն ո՞նք մերձ առ նա: Իսկ զերկուանայն Հայրապետութեան խոսքցին տեսարք Սիւնեաց, եւ ոչ Հուանեցան ընդ մի որ յերկուցն՝ Տրամանաւ եպիսկոպոսին իւրեանց առաքելոյն Պետրոսի, որ Հասեալ ի վախճան՝ պատուեր եւս վիճակին իւրով՝ ասուով ձեռնադրութիւն յԱղբանից եւ զմիւսն օրհնութեան՝ մինչևև միասին աթոռն Ս. Գրիգորի: Վասն այսորիկ ձեռնադրեցաւ Վրթանէս յեպիսկոպոսութիւն Սիւնեաց ի Չաքարիայ Հայրապետէն Աղբանից. ընդ նմին եւ զիւրն օրհնութեան եւս յամե անունն Սիւնեաց

1 Փոռոյ թղթով «Ի Սմանոյ կամ Սասանայոյ անունն դժուարու պիտի չգիտուէր առ Վարդանոց «Սասանայր»: Սեղիշոյ ոչ թէ «Ի Մովսէս», այլ «Ի Ներսէս», ձեռնադրեցաւ. Հմմտ. «Գիրք թղթոցն» էջ 51—69 եւ Փոռո: Վարդանայ «Ի Մովսէս», թուրք պատմաբան յայտնի է:

2 Հ. Ղ. Ա. Ինճիքեան եւս Վարդանայ խօսքերուն կարեւորութիւնն ասուով ի մէջ կը բերէ զՊետրոս իբրև «ստմարական» մէկը եւ մին ի ժողովական Հարց Մովսէս Բ. ի գու. մարտն կարծեցեալ ժողովոյն: Հնարանութիւն Հայաստ. Հատար Գ., էջ 368 եւ ցանկը:

3 Հմմտ. Արեւ. Արքեպ. Մեթիթ. Պատմ. ժողովոց էջ 78 եւ Ցուլմա՛: Ցուլմայ 22 Մասեանդարանի Մեթիթ. ի Վեներա, էջ 270, 372, 651 եւն:

4 Մովսէսի կաղանկատուցի պատմութիւն Աղբուանից աշխատքի: Մովսէս 1860, էջ 217:

5 Ուխտանէս Բ., էջ 120:

Աղղորդից, մինչև բարձու հակառակութիւնն եւ միայնեանց Արրահամ՝ զՏյորպայեանական աթոռն։

Ուսկից կը քաղէ կաղանկատուացին. աղբիւրն անձանթէ է մեզի, սակայն թէ ընտիր եւ հաստարիմ աղբիւր չէ ունեցած, իւրաքանչիւր գիր եւ սող յայտնարարուս կ'աղաղակին։ Նախ կաղանկատուացին Տատուածն այնպիսի սեղ մը զետեղուած է, որ ի հարկէ կը ստիպէ զմեզ կասկածելու, թէ արդեօք ուրիշն մը ձեռքէն ներմուծուած չէ։ Յողերես յատաջ կը պատմէր Մովսէս Յուստինիանոս կայսեր « Ի թագաւորն », Աւետարանաց Նշխարաց փոխադրութիւնն, Յովհաննու՝ Եփեսոսէն ի Կ. Պ. եւ Մատթէոսի՝ Անտիոքէն յԵրուսաղէմ՝ որուն պատճառաւ « Եայնժամ շարժեցան ամենայն մեծամտք, եւ ուր առաքեալ էր վարձանեալ՝ զամենեցուն աթոռն պատրիարք խոստովանեցան։ Անդանօր ապա եւ մերոյս բերաւ քան ի բարան յետ քան զվարդն Նոցա դեռեցի,՝ Ասոր սմիրլպպէս « Ե » ով մը կը կցի վերի հատուածը եւ այնուհետեւ կու գայ « Եւ սակս ինն դասակարգութեան », եւն, որ մասն կ'երեւայ նախնաբար « Եայնժամ », ին, հետեւաբար « Եւ զՀայս », եւն կախ կը մնայ երկու վերջակիտի մէջ՝ Մտուգիւ ալ սոյն զլուծն վերնագրոյն մէջ՝ « Եւ սակս », կտորին իսկասող « Եայնժամ », ին հետ հիւսուած է, իսկ Եւ զՀայս Տատուածը բոցորովն առ կախ զքրի մէջ ի վերջոյ։ — Երկրորդ՝ ժամանակագրական տեսակիտէ չի միարանիր Տատուած վերնոյն հետ, վասն զի կը պատահի « Ի թագաւորն », որնմն 527ին, մինչդեռ Մովսէս կը նստէր 573—603, Արրահամ՝ 607—610, գրեթէ մէկ դարու միջոց, Սակայն յատկապէս մեր նպատակը ստոր անհարգատութիւնն ցուցնել չըլլալով, այլ թէ Պետրոս Մովսիսի կամ կաթողիկոսութեան կրկին բաժանման հետ յարաբերութիւն ունէր կամ կրնար ունենալ, եւ թէ ուսկից ծագած է այսպիսի աւանդութիւն մը, դառնալը առաջագիր հարցերուն։

Առաջինն այնչափ հերքման պէտք չունի, վասն զի զՊետրոս 558ին վախճանած համարելովն ինքնին իսկ տեսնել է, ըստ Սերէոսի հաւատարիմ վկայութեան՝ 596ին կաթողիկոսութեան աթոռոյն կրկին բաժանման տանն կենդանի ըլլալուն անհնարութիւնն։ Նմանապէս Ալթինիսի 562ին նպակոպասկան

գահն բարձրանալովը չի կրնար ձեռնադրող զՄովսէս պահանջել։

Երկրորդին նկատմամբ հետեւեալ եմթագրութիւններն կը յաւելուրք։ Եթէ վերոյ եղեալ կաղանկատուացոյն խօսքերուն մէջ ճշմարտութեան հետեւի կ'ուզենք փնտռել, հարկ է նախ « Մովսէսի », սուտամբ զՅովհաննէս Բ. հասկնալ եւ մնացած կաթողիկոսութեան մասին վիպուածներն մերժել։ Ասոր վրայ հիմնուած զլթմանիսի ձեռնադրութիւնն ըստ կանոնական իրաւանց կը պահանջուի Յովհ. Բ. էն։ Բայց ժամանակակից դէպքերն եւս եթէ ի միասին ի նկատի առնուրք, իրաց հանգամանք կարծուածէն քիչ մը տարբեր կերպարանք կ'առնուն։

Ձ դարու Հայաստանի եկեղեցական վեճակն շատ ցուալի գրից մէջ կը գտնուեր, բովանդակ երկիրն երկու (եթէ ոչ աւելի) դաւանքի ատեան դարձած էր. — կաթողիկէս (հաղկեդոնականք) եւ ոչ-կաթողիկէս (Հակաբաղկեդոնականք) վերջնոյն ի կողմն էին նսեւ այն դարուն կաթողիկոսաց մէկ մեծ մասն, այսպէս Յովհաննէս, Մովսէս, Արրահամ, թէ եւ ոչ այնչափ վերահասու հակառակութեան առարկայ եղող եկեղեցոյն էութեան։ Իսկ առաջնոյն պաշտպան դասուանքն եւ անմանջ անուանքն ու գրութիւնք հակառակորդաց ի Տուր մայչելովն, անձանթէ են մեզի. սակայն պատճառական ցուցմամբ կրնանք մակաբերել առաջնոյն ջատագովաց բաւական ստուար թիւ մը. նկատելով հակառակ կողմին անթիւան համար գրութիւնքն, որոնք առանց շարժառիթ պատճառաց ի հարկէ չէին դիմեր գրելի։ Դ. տիեզերական սիւհ Տագոսին ջերմաջերմ ջատագովաց զլուսաօրք կը հանդիսանան այս դարուս երեք գրացի ազգեր, Վիրք, Աղուանք եւ Սիւնիք, որոնք այս պատճառաբաժնուած էին յայ կաթողիկոսաց հետ։ Սիւնիք գլխաւորաբար պաշտպան կիցաւ իւր Ալթինուէս նպիսկոպոսի ատեն։ Այս գտնութիւնն այն ստիճանի հասած էր, որ Յովհաննէս Բ. կը ստիպուի զՄատթէոս անուն քահանայ թէ ի Սիւնիս եւ թէ Աղուանս խաւրել առանձին թղթերով՝<sup>1</sup> որոնց մէջ կը պատուիրուի Սիւնեաց եւ Աղուանից նպիսկոպոսաց Քաղկէզոսի Ս. Հաւատքը գաւանդելը,<sup>2</sup> զորոնք սիրով կ'ընդունէին,

1 Գիրք Թղթոց էջ 78—80, 81—84  
2 Ա. Ալթինուէս թղթին մէջ միայն Նետտուականաց անունն կը գտնուր, սակայն Ձ դարու Հեղինակք այդ անուամբ ալ կ'անուանէին Քաղկէզոսի ջատագործներն, ինչպէս լուր կը տեսնուի Գիրք Թղթոցի նամակներէն եւ մանաւանդ առ Արքանս Թղթէն, ուր թէ Նետտուական

1 Պատմ. Սերէոսի եպիս չէրակն հրտ. Պատկանեանի, Պետերբուրգ 1879, էջ 58։

Հարանել, Ղմանայեւ Արրահամ կաթնուղիկոսն իւր «Թուղթ շրջագայական» ի մէջ յայտնապէս կը յիշատակէ թէ Ախրք եւ Աղուանք քաղկեզոնի կողմէն էին, եւ թէ իւր նախորդք Աղուանից թղթեր, գրած էին այս նկատմամբ. «Ես աջադոյն քան զմեզ կացեալքն յաստիճանի կաթնուղիկոսութեան՝ յԱղուանս, իսկ մէք ի Ախրս առ Վիւրոյն (գրեցաք)», ինքն ալ բացարձակապէս կ'արգելու որեւիցէ Հաղորդութեան անոնց Հետ, «նոյն հրաման եւ վասն Աղուանիցն անշարժ կայցէ, զի պատկառեալ զարձցին ի թիւր (!) ճանապարհէն»<sup>1</sup>

Անտարակոյս այս իսկ պատճառ եղած է Արթանիսի ձեռնարկութիւնն Աղուանից, նոյն ժամանակ ճշմարտամիտ, քաղկեզոնի Ս. Լուսառով Զարարիա Բ կաթնուղիկոսէն առնելու, թե՛րեւս Պետրոսի խորհրդով, որուն աշակերտած էր երբեմն: Այսպիսի նորանշան պատահարքի մը անհնարին չէ յետագայից բերանը հազարուակի մեկութիւն ստանալու: Յիշեցք հարեանցի ալ, որ այս զէպքերս — Սիւնեաց բաժանութեան Աւետարանաց նշխարաց փոխադրութիւնը, — այլեւայլ կերպով կ'առնուէին ձեռագրաց մէջ, համեմատ ի միջի այլոց Անանիա կաթնուղիկոսին թուղթը<sup>2</sup> եւ հռչակաւորն Սողոմոնի Մաքենոցաց վանահօր այս առթիւ պատմածը:<sup>3</sup>

(Ըրբնաւիւթի)

\* Ն. Ա.



### Պ Ա Յ Մ Ա Կ Ա Ն

#### ՆԵՐՍԵՍԻԱՆԻՊՈՒՍՈՅ ԱՌԵՒԵՆՈՒԹԵԱՆ ՀՐԵՐ ՀՐԵՆՆԵՐԻ ՆԵՐՍԵՍԻԱՆԻ ՓՐԵՍԻՆ ԸՆԴՈՒՆ ԿԻՍՈՒՆ

Ինչպէս գիտեցք՝ Եղիսաբեթուպոլսոյ քաղաքային վարչութիւնը ի սկզբանէ հետէ շատ մտադիր էր, որ քաղաքին մէջ խաղաղութիւնն

նաց եւ թէ «Քաղկեզոնականաց» սեռաններն նշանակուած են, որոնցմէ յիշարիտ մին կամ միւս կրնայ ըլլալ. եթէ նետարարանները կ'ընդունէին ապա զ'«Քաղկեզոնական» ներք, պիտի մեթէին եւ կամ ընդ հակառակը:

<sup>1</sup> Գիրք Քղթոց, էջ 194:  
<sup>2</sup> Մարտի 1898—71: Հմմտ. եւ Մաշտոցի առ Յեր Գեորգ կաթնուղիկոս թուղթն, ուր բառական յառաջ կը բերուի կաղանկատուացոյցն խոսքերն: Արարող 1902, էջ 751:  
<sup>3</sup> Արգիտեան՝ Ամանիա Քարգամանի, եւս, էջ ԺԲ, Ծած. 2, եւ Ազատեանիցերս եւ իւր բազմազարեան գաղափարք, էջ 200—1, ուր յառաջ կը բերուի կտոր մը, որ բառ առ բառ համեմայն է կաղանկատուացոյցն. բայց զժամանակս հաստատան անորոշապէս ի մէջ չէ բերուած, որ լայս կրնար սփռել մեր խնդրոյն նկատմամբ:

եւ կարգ ու կանոն պահուին — Ասոնց նկատմամբ, այլեւայլ ժամանակ այլեւայլ կարգադրութիւններ եղած են: — Առ այս կը Հային նաեւ 1831ին, ոստիկանութեան առաջնորդին առջեւը գրուած հրահանգներն, որ ժամանակը նկատելով՝ բարձր քաղաքարկութիւն ու մեծ յառաջդրմութիւն կը ցուցնեն:

Ասոնց մէջ կը կարգադրուի ի մէջ այլոց. որ ոստիկանութեան վերատեսուչն՝ սակն տուած եւ իրեն առջեւ ելլելի սակն խնդիրներուն վրայք արձանագրութիւն շինէ, թէ՛ իր առեւձին գիտութեանն ու թէ՛ քաղաքային խորհրդին համար: — Պարսաւաթղիներ տարածող, պատիւը նուստացընող, իր առաջնորդներուն զէմ՝ ծանր յանցանքներ զնոյններն՝ անմիջապէս քաղաքաբաշխութեան ծանուցուին: Ու որպէս զի առ անկարգութիւններն աւելի շուտով երեւան ելլեն, տանպետներու ձեռք սակն տան տիրող իմացընէ, որ եթէ ասանկ բանք գիտեն, շուտ մը ոստիկանութեան ծանուցանեն, որ ինք դատաւորին Հետ անոր առջեւն առնու: — Յիշոց, ՀայՏոյսնք, սուտ երդում ընել արգելուած է: Զայնպիսիներն, առանց անձի զանազանութեան զիւրցանելու է առաջնորդութեան: — Գիշերային պահապանները ժամերը ծանուցանելէն զատ. հսկելու են ստահակներու եւ գողերու վրայ. զանոնք ձեռք բերեն եւ մինչեւ առտու պահակապետութեան տուը պահեն: — Կասկածաւոր, առանց վկայականի մարդիկ, ընդունուելու չեն քաղաք — մինչեւ որ յայտնի չըլլայ թէ ինչ վիճակի մարդիկ են: Պանդոկապետներն՝ ասանկները, տանպետներուն եւ ոստիկանութեան վերատեսչին ծանուցանելու են: Եկամուտ արհեստաւորներն ալ քաղաք չեն կրնար տեղաւորուիլ, մինչեւ որ քաղաքաբաշխութեան, իրենց արհեստը բանեցնելու հրաման ընդունին: — Գինետոններու եւ ինչեւաններու մէջ, գիշերը միայն՝ մինչեւ ժամը 10 կրնայ զբօսանք ըլլալ: — Պատահելի կրակներուն առջեւն առնելու համար, տանպետները նայելու են, որ վաւարաններու մօտ կամ տանիքներու մէջ զիւրավատ բանք չգտնուին: Օտար մուրացիները՝ քաղաք չեն կրնար ողորմութիւն խնդրել: Կեղեակ մուրացիները զսպուելու, բռնուելու են: Քաղաքացի եղողներուն մուրալու հրաման կայ միայն ուրբաթ օրերը: Փողոցներու վրայ, ինչեւաններու մէջ, վայնասուն ընողները, կուսարարները՝ բռնուին եւ յանցանքնուն համեմատ պատժուին: Խշուտց հանողները, մանաւանդ գիշերները՝